

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀՄԱՅԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԻՆԴՈՅԱՆ

Նորապսակ տ. Հմայակ եպիսկոպոսը, ազգանի անունով՝ Ազատ, մականունով՝ Հովսեփյան, ծնվել է 1908 թվականին Քղի գավառի Ապողնակ գյուղում:

Ապրիլյան եղեռնին ծնողների նահատակությունից հետո, որբացել է և ընկել Մալաթիայի, Սեբաստիայի և ապա Կորնթոսի ամերիկյան Նիզր Իստ Ռիլիֆի որբանոցները:

1927 թվականին, լուսահոգի տ. Եղիշե Դուրյան պատրիարքի օրով, ընդունվել է Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի Ժառանգավորաց վարժարան, որն ավարտել է 1932-ին, իսկ 1932—1935 թվականներին սովորել և ավարտել է ընծայարանի բաժինը՝ փայլուն հաջողությամբ:

1933 թվականին սարկավագ և 1936-ին՝ կուսակրոն քահանա է ձեռնադրվել լուսահոգի տ. Թորգոմ պատրիարք Գուշակյանի ձեռամբ:

Այնուհետև երիտասարդ հոգևորականի առաջ բացվել է վանական, վարչական և հովվական ծառայության դաշտ:

1936—1945 թվականներին Երուսաղեմի հայոց ս. Հակոբյանց վանքում վարել է պատասխանատու պաշտոններ. եղել է սրբազան պատրիարքի գավազանակիր, մատակարար, Տնօրեն ժողովի անդամ, միաժամանակ դասավանդել է մի շարք եկեղեցագիտական-կրոնական առարկաներ Ժառանգավորաց վարժարանում, ընծայարանում և ս. Թարգմանչաց նախակրթարանում:

1942 թվականին ստացել է վարդապետական, իսկ 1955-ին՝ ծայրագույն վարդապետական իշխանություն:

1945—1968 թվականներին պաշտոնավարել է որպես հոգևոր հովիվ նախ Հայֆայի ս. Եղիա եկեղեցում և ապա առավելապես՝ Կանադայի և Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի եկեղեցիներում, այդ թվում՝ Հեյվըր Հիլի ս. Գրիգոր Լուսավորիչ, Լորենսի, Յունիըն Սիտիի, Նյու-Յորքի ս. Խաչ եկեղեցիներում և Թրոյի ս. Պետրոս եկեղեցում:

1951—1955 թվականներին եղել է ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի թեմական խորհրդի անդամ և ատենապետ: Որպես եկեղեցական պատգամավոր 1955 թվականի հոկտեմբերին ս. Էջմիածնում մասնակցել է Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի ընտրության, օծման և գահակալության հանդիսություններին:

Տ. Հմայակ եպիսկոպոսը զբաղվել է նաև գրականությամբ և հրապարակախոսությամբ: Նա աշխատակցել է «Սիոն» և «Հայաստանյայց եկեղեցի» ամսագրերին և ամերիկահայ առաջադիմական մամուլին: Նրա գրչին են պատկանում «Ճանանչներ», «Ընդհանուր նշումներ» (Ա և Բ հատորներ) և «Հայրապետական պատվիրակություն ի Թեհրան» հուշագրական աշխատությունները:

Տ. Հմայակ եպիսկոպոսն իր ետին ունի շուրջ 40 տարիների եկեղեցական, կրթական, հովվական և քարոզչական բեղուն գործունեություն:

1974 թվականի օգոստոսին տ. Հմայակ ծ. վարդապետը Վեհափառ Հայրապետի կողմից հրավիրվել է աշխատանքի Մայր Աթոռ և սեպտեմբերի 29-ին եպիսկոպոս ձեռնադրվել՝ օծակից ունենալով տ. Ներսես և տ. Արիս ծ. վարդապետներին:

Տ. Հմայակ եպիսկոպոս Ինդոյանը հայ եկեղեցու կարգ ու կանոնին նախանձախնդիր, պարտաճանաչ, ծառայասեր հոգևորական է, որ յուրովսանն և նվիրումով ծառայել է մեր ժողովրդի հոգևոր սպասին: